



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ 15(329) 14.08.2017թ.

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

	<b>ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>	
168	«Քանձասար», «Հունտի կիրճ» և «Տող» զբոսաշրջային երթուղիներով ուղևորափոխադրումների մասին» ԼՂՀ կառավարության N 564-Ն որոշումը.....	2
169	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 577-Ն որոշումը.....	4
170	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 578-Ն որոշումը.....	5
171	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 581-Ն որոշումը.....	6
172	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 582-Ն որոշումը.....	7
	<b>ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>	
173	ԼՂՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ 2330/02/16թ. որոշումը.....	8
174	ԼՂՀ Գերագույն դատարանի վարչական գործ ԸԻԴ 0110/05/16թ. որոշումը.....	19
175	ԼՂՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ 0151/02/17թ. որոշումը.....	27

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

1 օգոստոսի 2017թ.

N 564-Ն

ք. Ստեփանակերտ

**«ԳԱՆՁԱՍՄԱՐ», «ՀՈՒՆՈՏԻ ԿԻՐՃ» ԵՎ «ՏՈՂ» ՋԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ  
ԵՐԹՈՒՂԻՆԵՐՈՎ ՈՒՂԵՎՈՐԱՓՈՒՄԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածին համապատասխան, ներքին զբոսաշրջության զարգացմանը խթանելու նպատակով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ռ ր ո շ ու մ է.**

1. Հաստատել «Գանձասար», «Հունոտի կիրճ» և «Տող» զբոսաշրջային երթուղիներով ուղևորափոխադրումների կազմակերպման պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի միջոցներից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությանը 2017 թվականի ինն ամսում հատկացնել 3 131 000 (երեք միլիոն հարյուր երեսունմեկ հազար) ՀՀ դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 423400 «Տեղեկատվական ծառայություններ» հոդվածով՝ 266 000 ՀՀ դրամ, 423900 «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով՝ 2 865 000 ՀՀ դրամ)՝ սույն որոշման 1-ին կետում նշված զբոսաշրջային երթուղիներով 2017 թվականի հուլիսի 20-ից մինչև սեպտեմբերի 1-ը ուղևորափոխադրումները կազմակերպելու նպատակով:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված ժամկետի ավարտից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանը ներկայացնել հաշվետվություն՝ ծախսված գումարների և արդյունքների մասին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հուլիսի 20-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված  
Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության կառավարության  
2017 թվականի օգոստոսի 1-ի N 564-Ն որոշման

**Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր**  
**«ԳԱՆՁԱՍԱՐ», «ՀՈՒՆՈՏԻ ԿԻՐՃ» ԵՎ «ՏՈՂ» ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ**  
**ԵՐԹՈՒՂԻՆԵՐՈՎ ՈՒՂԵՎՈՐԱՓՈՒՄԱԴՐՈՒՄՆԵՐԻ**

1. Սույնով հաստատվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատմամշակութային վայրեր ճանաչողական այցերի (ուղևորության)՝ Ստեփանակերտից դեպի «Գանձասար», «Հունոտի կիրճ» և «Տող» զբոսաշրջային երթուղիներով (այսուհետ՝ զբոսաշրջային երթուղի) ուղևորափոխադրումների կազմակերպման պայմանները:

2. Զբոսաշրջային երթուղիներով ուղևորափոխադրումները կազմակերպվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) և ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ (այսուհետ՝ փոխադրող) միջև կնքված ուղևորափոխադրումների կազմակերպման պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) հիման վրա:

3. Պայմանագիրը կնքվում է զբոսաշրջային պայմաններին համապատասխանող արտաքին ու ներքին կահավորվածությամբ ավտոբուսներ ունեցող փոխադրողի հետ:

4. Պայմանագրում մանրամասն սահմանվում են ուղևորափոխադրումների կազմակերպման, ուղերթերի գրանցման, փոխադրավարների վճարման և այլ պայմանները:

5. Սույն պայմանների 1-ին կետում նշված զբոսաշրջային երթուղիներով իրականացված ուղևորափոխադրումների վճարները (փոխադրավարները) վճարում է նախարարությունը՝ պայմանագրի հիման վրա, տասնհինգօրյա պարբերականությամբ:

6. Ուղևորափոխադրումներն իրականացվում են վաճառվող ուղետոմսերի հիման վրա: Ուղետոմսերն ունեն տպարանային համարակալում և համարվում են խիստ հաշվառման փաստաթուղթ:

7. Ուղետոմսերի վաճառքը կազմակերպվում է «Կենտրոնական ավտոկայան» փակ բաժնետիրական ընկերության կողմից, որոնց վաճառքի գները կազմում են՝

1) «Նիկոլ Դումանի տուն-թանգարան»-«Գանձասար» ուղղությամբ՝ 250 ՀՀ դրամ.

2) «Հունոտի կիրճ» ուղղությամբ՝ 100 ՀՀ դրամ.

3) «Տնջրե»-«Տող» ուղղությամբ՝ 250 ՀՀ դրամ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**  
**ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

9 օգոստոսի 2017թ.

N 577-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **առ ոչ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 141 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղբուքի շրջանի Տողի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,35 հեկտար խաղողայգին փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

9 օգոստոսի 2017թ.

N 578-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ա ք ա շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ստեփանակերտ քաղաքի Ա. Հեքիմյան փողոցի թիվ 8բ/71 հասցեում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,067885 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողերը՝ համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ խառը կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 օգոստոսի 2017թ.

N 581-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 677 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Կարմիր Շուկայի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,24 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Կարմիր Շուկայի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

10 օգոստոսի 2017թ.

N 582-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ոքոշում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 384 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Քոասնիի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 0,13 հեկտար անտառը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԳԵՐԱԳՈՒՑՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում Վարչական գործ ԸԻԴ N 0110/05/16թ.  
Վարչական գործ ԸԻԴ N 0110/05/16թ.  
Նախագահող դատավոր Ն.Գրիգորյան  
Դատավորներ Հ.Գրիգորյան  
Կ.Սաղյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ 24-ին հուլիսի 2017թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը /այսուհետ՝  
Գերագույն դատարան/ վճռաբեկության կարգով  
Նախագահությամբ՝ դատավոր Գ. Արզումանյանի  
Դատավորներ Ի. Կարապետյանի  
Ա. Հայրապետյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Համիկ Սովսեպի Համբարձումյանի ընդդեմ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի, Միրա Հրանտի Բարսեղյանի՝ վարչական ակտերի առջին լինելը ճանաչելու և հետևանքները կիրառելու պահանջների մասին վարչական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2017 թվականի ապրիլի 28-ի որոշման դեմ հայցվոր Հ.Համբարձումյանի և նրա ներկայացուցիչ Ա.Մադաթյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը**

2016 թվականի մայիսի 20-ին Համիկ Համբարձումյանը հայց է ներկայացրել Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /այսուհետ՝ նաև Վարչական դատարան/ ընդդեմ ԼՂՀ կառավարության աշխատակազմի, Հենրիխ Համբարձումյանի իրավահաջորդ Միրա Բարսեղյանի՝ խնդրելով ճանաչել Ասկերանի շրջանի Խնածախ համայնքում գտնվող առանձնատան և դրան կից տնամերձ հողամասի նկատմամբ Ստեփանակերտ քաղաքի «Տեխնիկական գույքագրման բյուրո» պետական փակ բաժնետիրական ընկերության /այսուհետ՝ նաև «Տեխնիկական գույքագրման բյուրո» ՊՓԲԸ կամ Տեխնիկական բյուրո/ կողմից 1999թ. ապրիլ ամսին գույքագրման 520 համարի տակ կատարված Նինա Դարչինի Ավագյանի սեփականության իրավունքի գրանցման ու նույն համարը կրող տեխնիկական անձնագրի առջին լինելը, և անվավեր ճանաչել կամ վերացնել 13.04.1999թ. թիվ 2/355 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը:

Վարչական դատարանը /դատավոր՝ Կ.Մելքունյան/ 2016 թվականի մայիսի 27-ի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժել է:



Հայցվորի ներկայացուցիչ Ա.Մադաթյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը, Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ /նախագահող՝ դատավոր Հ.Խաչատրյան, դատավորներ՝ Հ.Աբրահամյան, Լ.Ավանեսյան/ 2016 թվականի հունիսի 28-ի որոշմամբ Վարչական դատարանի նշված որոշումը վերացրել է, որի հիման վրա Վարչական դատարանը 2016 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ հայցադիմումն ընդունել է վարույթ և հարուցել վարչական գործ:

Վարչական դատարանի 2016 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ Համլետ Մովսեսի Համբարձումյանը ներգրավվել է գործին որպես երրորդ անձ՝ պատասխանողի կողմում:

2016 թվականի դեկտեմբերի 29-ին վարչական գործը հանձնվել է դատավոր Ռ.Ջահանգիրյանին:

Վարչական դատարանի 2017 թվականի փետրվարի 24-ի վճռով հայցը մերժվել է:

Հայցվոր Հ.Համբարձումյանի և նրա ներկայացուցիչ Ա.Մադաթյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի 2017 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է, և Վարչական դատարանի 2017 թվականի փետրվարի 24-ի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2017 թվականի մայիսի 26-ին հայցվորը և նրա ներկայացուցիչը բերել են վճռաբեկ բողոք, որը Գերագույն դատարանի 2017 թվականի հունիսի 19-ի որոշմամբ վերադարձվել է:

2017 թվականի հունիսի 28-ին հայցվորը և նրա ներկայացուցիչը կրկին բերել են վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ բողոքը և վարչական գործը դատարանի կազմին են հանձնվել 2017 թվականի հունիսի 30-ին:

Գերագույն դատարանի 2017 թվականի հուլիսի 12-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է Գերագույն դատարանի վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքների նորմերի խախտումների հիմքերով:

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, 24-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 113-րդ և 117.12-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջները:

Նշված պնդումը բողոքաբերները պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի վերանայել Վարչական դատարանի վճիռը վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում և անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկել հայցվորի իրավական շահագրգռվածություն ունենալու հանգամանքը պարզելու նպատակով բողոքը լրիվ և բազմակողմանի ըստ էության քննելու համար: Վերաքննիչ դատարանը կիրառել է սույն գործով կիրառման ոչ ենթակա ԸԻԴ N0188/05/15թ. վարչական գործով ԼՂՀ Գերագույն դատարանի առ 11.05.2016թ. որոշմամբ արտահայտած

դիրքորոշումը և օրինական ուժի մեջ թողել ստորադաս դատարանի ոչ օբյեկտիվ և օրենքի պահանջներին հակասող վճիռը: Ըստ բողոքի՝ Վերաքննիչ դատարանը պետք է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերին համապատասխան կիրառեր «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ԼՂՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջներն ու բեկաներ և փոփոխեր բողոքարկվող վճիռը՝ կայացնելով նոր դատական ակտ՝ հայցապահանջը բավարարելու մասին:

Բողոքաբերները փաստել են, որ Վերաքննիչ դատարանը բողոքի շրջանակներում լուծման համար բարձրացրել է երկու հարց, որոնցից առաջինն այն է, թե արդյո՞ք հայցվորը սույն գործով ունի իրավական շահագրգռվածություն, թե ոչ, իսկ երկրորդը՝ արդյո՞ք համար 520 տեխանձնագիրը և 520 համարի տակ կատարված գրանցումը համարվում են վարչական ակտեր: Մակայն Վերաքննիչ դատարանը պատասխանել է միայն առաջին հարցին և չի պատասխանել այն հարցին, թե ճիշտ է վարվե՞լ, արդյո՞ք, Վարչական դատարանը, տեխնիկական անձնագիրն ու համար 520 գրանցումը չդիտարկելով որպես վարչական ակտեր՝ կամ իրավունք հաստատող փաստաթղթեր:

Բողոքաբերների պնդմամբ՝ Վարչական դատարանի վերը նշված հետևությունը հակասում է սույն գործով Վերաքննիչ դատարանի 28.06.2016թ. որոշմամբ նախկինում արտահայտած դիրքորոշմանը, համաձայն որի՝ վերացնելով Վարչական դատարանի՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը, Վերաքննիչ դատարանը հստակ նշել է, որ հայցադիմումը համապատասխանում է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված հայցադիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող իրավադրույթների պահանջներին, և վիճարկվող գրանցումը և տեխանձնագիրը դիտարկվել են որպես իրավունք հաստատող փաստաթղթեր և վարչական ակտեր:

Ըստ բողոքի՝ եթե Վերաքննիչ դատարանը գտներ, որ գրանցումը և տեխնիկական անձնագիրը վարչական ակտեր չեն, ապա պետք է գործի վարույթը կարճեր՝ գործը վարչական դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Վարչական դատարանը վճռում հստակ նշելով, որ բողոքարկվող գրանցումը և տեխնիկական անձնագիրը վարչական ակտեր չեն, փոխանակ գործի վարույթը կարճելու, քննել է գործը և վերջում պատասխանել քաղաքացիական դատարանին ընդդատյա հարցին:

Բողոքաբերները գտնում են, որ եթե դատարանը վիճելի բնակելի տունը փաստացի տիրապետելու մասին ապացույցները բավարար չի համարել, ապա օրենսդիրը չի արգելում դատարանին պահանջելու լրացուցիչ ապացույցներ:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը բողոքաբերները պատճառաբանել են նրանով, որ գործով առկա է նյութական և դատավարական իրավունքի նորմերի առերևույթ էական խախտում, և որ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերները խնդրել են Վերաքննիչ դատարանի 2017 թվականի ապրիլի 28-ի որոշումը բեկանել ու փոփոխել և

կայացնել նոր դատական ակտ՝ հայցապահանջը բավարարելու մասին կամ գործն ուղարկել Վարչական դատարան՝ նոր քննության:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Մովսես /փաստաթղթերում օգտագործվում է նաև Մոսես անունը/ Բաղդանի Համբարձումյանի և Նինա Դարչինի Ավագյանի ամուսնությունը գրանցվել է 1948թ. փետրվարի 16-ին /հատոր 1-ին, գ.թ. 10/:

2. 1984թ. ապրիլի 11-ի պայմանագրով Կառլեն Պետրոսյանի կողմից վաճառված և Նինա Ավագյանի կողմից գնված տունը համատեղ սեփականության իրավունքով պատկանում է Մովսես Համբարձումյանին և Նինա Ավագյանին /հատոր 1-ին, գ.թ. 19, 20/:

3. Հայցվորը, Համլետ Համբարձումյանը և հանգուցյալ Հենրիխ Համբարձումյանը Մովսես Համբարձումյանի և Նինա Ավագյանի զավակներն են /հատոր 1-ին, գ.թ. 9, 102/:

4. Հենրիխ Համբարձումյանը և Միրա Բարսեղյանը ամուսնացել են 01.03.1978թ. /հատոր 1-ին, գ.թ. 11/:

5. 1999թ. ապրիլի 13-ին Հենրիխ Համբարձումյանին տրվել է ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ 24.04.1993թ. մահացած Նինա Ավագյանի թողած ժառանգական գույքի՝ բնակելի տան նկատմամբ /հատոր 1-ին, գ.թ. 17, 18/:

6. Ըստ 1999թ. ապրիլին կազմված անհատական բնակարանային ֆոնդի բնակելի տան տեխնիկական անձնագրի՝ 11.04.1984թ. առուվաճառքի պայմանագրի համաձայն որպես տան սեփականատեր նշված էր Նինա Ավագյանը, որպիսի գրառումը ջնջված է և կնիքով հաստատված ժառանգության վկայագրի հիման վրա փոխարինված է Հենրիխ Համբարձումյանի սեփականատեր լինելու վերաբերյալ նոր գրառումով /հատոր 1-ին, գ.թ. 13-16/:

7. Ըստ հայցադիմումի՝ Հենրիխ Համբարձումյանը մահացել է 2015թ. հուլիսի 2-ին:

8. ԼՂՀ Գերագույն դատարանի 2017թ. հունիսի 26-ի որոշմամբ բեկանվել է ըստ հայցի Համիկ Մովսեսի Համբարձումյանի ընդդեմ ԼՂՀ Ասկերանի շրջանի Խնածախ համայնքի աշխատակազմի, Միրա Բարսեղյանի՝ ԼՂՀ Ասկերանի շրջանի Խնածախ համայնքի ղեկավար Մ.Նիկողոսյանի կողմից Հենրիխ Համբարձումյանի անվամբ 2010թ. փետրվարի 16-ին տրված տնտեսական գրքի քաղվածքի առ ոչինչ լինելը ճանաչելու մասին ԸԻԴ N0097/05/16թ. վարչական գործով Վերաքննիչ դատարանի 10.05.2017թ. որոշումը, և գործն ուղարկվել է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: Միաժամանակ առաջարկվել է ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու մասին հայցադիմումը դատարանի կողմից վարույթ ընդունելու և քաղաքացիական գործ հարուցելու դեպքում քննարկել երկու՝ ըստ էության սկզբնական /հիմնական/ և ածանցյալ հայցապահանջները մեկ վարույթում քննելու հարցը:

#### **4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Սույն վճռաբեկ բողոքը Գերագույն դատարանի վարույթ ընդունելը պայմանավորված է դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման, հայցի /դիմումի/ ընդդատությունը /ենթակայությունը/ ճիշտ որոշելու, վերադաս դատարանի դիրքորոշումներն առաջին աստիճանի դատարանի կողմից կիրառման վերաբերյալ հարցերով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու անհրաժեշտությամբ և ստորադաս դատարանների կողմից դատավարական իրավունքի նորմերի առերևույթ էական խախտման առկայությամբ:

Գերագույն դատարանը վճռաբեկ բողոքի շրջանակներում անհրաժեշտ է համարում անդրադառնալ դատարանի կողմից գործի փաստերն ի պաշտոնե պարզելու, գործի իրական փաստերի բացահայտման գործընթացում ԼՂՀ վարչական դատավարության և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերով դատարանին վերապահված լիազորություններն ակտիվորեն օգտագործելու /դատարանի իրավասությունների իրականացումը գործի հարուցման, նախապատրաստման և դատական քննության փուլերում/ հարցերին:

Վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը, Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Արցախի Հանրապետության Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Արցախի Հանրապետության Սահմանադրության՝ «Արդար դատաքննության իրավունքը» վերտառությամբ 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Արդար դատաքննության իրավունքն ամրագրված է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Ռինգեյսենն ընդդեմ Ավստրիայի գործով հավաստել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը «տարածվում է բոլոր դատավարական գործողությունների նկատմամբ, որոնց արդյունքն ունի վճռորոշ նշանակություն քաղաքացիական իրավունքների և պարտականությունների համար» /տե՛ս, Ռինգեյսենն ընդդեմ Ավստրիայի գործով 1971թ. հուլիսի 16-ի վճիռը/:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Դատարան դիմելու իրավունքը» վերտառությամբ 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ԼՂՀ Սահմանադրությամբ, ...օրենքներով և այլ իրավական ակտերով...ամրագրված իրավունքները և ազատությունները...:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝ 1/ գնահատում է ապացույցները, 2/ որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել և որոնք չեն պարզվել, 3/ որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, 4/ որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Նույնպիսի իրավական նորմ է նախատեսել նաև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը /հոդված 122/:

Գերագույն դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում վերլուծելով վերը նշված իրավական նորմերը, արձանագրել է, որ դատարանի առջև բոլոր դեպքերում խնդիր է դրված առավելագույնս պարզելու գործի իրական հանգամանքները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, փաստերի և իրավունքների իրականությանը համընկնելը և կայացնելու դատարանում պարզված հանգամանքներին համապատասխան դատական ակտ /տե՛ս, օրինակ, ԸԻԴ N1794/02/2011թ. քաղաքացիական գործով Գերագույն դատարանի 05.04.2012թ. որոշումը/: Դատարանը, համաձայն ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի /ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի/, այդ խնդիրը լուծում է յուրաքանչյուր ապացույց գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատելու միջոցով:

Համաձայն գործող օրենսդրության՝ օրենսդիրը սահմանագատել է քաղաքացիական դատավարության և վարչական դատավարության կարգով գործերը քննելու և լուծելու հարցում դատարանի իրավասությունները, և քաղաքացիական կամ վարչական գործով վարույթ հարուցելու համար դատարանն առաջին հերթին պետք է լուծի տվյալ գործի դատական ենթակայության, իսկ ապա՝ նրա ընդդատության հարցը:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դատական գործերով /քաղաքացիական և վարչական/ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը կախված է հայցադիմումը /դիմումը/ ընդունելիս դատավորի ճիշտ գործողություններից, քանի որ հայցի հարուցումը կարևորագույն դատավարական գործողություն է, որը նախադրյալներ է ստեղծում դատարանի առջև դրված խնդրի /այն է՝ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննելու/ իրականացման համար:

Հայցադիմումի ձևը և բովանդակությունը սահմանող ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ, 73-րդ /ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ, 78-րդ/ հոդվածները, բացի այլ տվյալներից, պահանջում են, որ հայցադիմումում նշվեն այն փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորի պահանջը և այն ապացույցների ցանկը, որոնք հաստատում են հայցվորի պնդած փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե ինչ փաստի հաստատմանն է այն ուղղված:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ օրենսդրության նշված պահանջների պահպանումն առավելապես կարևոր է վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը պարզելու համար, քանի որ միմյանց հետ փոխկապակցված մի քանի պահանջներով, որոնք ենթակա են քննության վարչական և քաղաքացիական

դատավարության կարգով, դատարանը պետք է տարբերի հիմնական պահանջը անանցյալ պահանջներից և ճիշտ ընտրի դատավարության ձևը:

Օրենսդիրը քաղաքացիական և վարչական գործերը տարանջատում է՝ ելնելով այն հանգամանքից, թե ինչպիսի /հանրային կամ մասնավոր/ իրավահարաբերություններից ծագող վեճից է բխում այդ գործերի հարուցման համար հիմք հանդիսացած հայցը, իսկ մի քանի փոխկապակցված հայցապահանջների առկայության դեպքում՝ դրանցից հիմնականը:

Ինչպես հետևում է գործի նյութերից՝ մերժելով հայցվորի պահանջը, Վարչական դատարանը գտել է, որ նախ նա սույն գործով շահագրգիռ անձ չէ, երկրորդ՝ Տեխնիկական բյուրոյի կողմից կատարված գրանցումը և տեխնիկական անձնագիրը վարչական ակտեր չեն: Վարչական դատարանը նման հետևությունը հիմնավորել է նրանով, որ նշված գրանցումը և տեխնանձնագիրը ուղղված չեն անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ հայցվորի որևէ իրավունք չի խախտվել, մեջբերելով ԸԻԴ N 0188/05/15թ. վարչական գործով Գերագույն դատարանի 11.05.16թ. որոշման պատճառաբանությունները և հետևությունները, անդրադարձել է միայն հայցվորի իրավունքների խախտման վերաբերյալ վերաքննիչ բողոքի փաստարկներին, չքննարկելով Տեխնիկական բյուրոյի գրանցումը և տեխնիկական անձնագիրը վարչական ակտ հանդիսանալու կամ չհանդիսանալու հարցադրումը:

Գերագույն դատարանը հարկ է համարում նշել, որ ըստ հայցի Համիկ Մովսեսի Համբարձումյանի ընդդեմ ԼՂՀ Ասկերանի շրջանի Խնածախ համայնքի աշխատակազմի, Միրա Բարսեղյանի՝ Հենրիխ Մովսեսի Համբարձումյանի անվամբ 2010թ. փետրվարի 16-ին տրված տնտեսական գրքի քաղվածքի առ ոչինչ լինելը ճանաչելու մասին ԸԻԴ N 0097/05/16թ. վարչական գործով Գերագույն դատարանը 26.06.2017թ. որոշմամբ, կարևորելով գործի նախապատրաստման փուլը, արձանագրել է, որ հայցվոր Չ. Համբարձումյանը և նրա ներկայացուցիչը «սկսած 2015թ. տարբեր հայցապահանջներով դիմել են Վարչական դատարան՝ մի կողմից՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու /ԸԻԴ N0270/05/15թ. վարչական գործ, որի վարույթը կասեցված է/, մյուս կողմից՝ վարչական ակտերի առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքները կիրառելու /ԸԻԴ N0110/05/16թ. վարչական գործ/, երրորդ դեպքում՝ վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու /բողոքարկված գործը/, իսկ չորրորդ դեպքում՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և իրավունքի գրանցումը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջների վերաբերյալ: Սակայն Վարչական դատարանը չի ղեկավարվել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի պահանջներով, որի կատարման դեպքում կապահովվեր հայցվորի ենթադրյալ խախտված իրավունքների դատական պաշտպանությունը»:

Գերագույն դատարանն արձանագրել է նաև, որ «Բոլոր դեպքերում վարչական ակտն անվավեր կամ առ ոչինչ ճանաչելը չպետք է ինքնանպատակ լինի: Համաձայն հայցադիմումի՝ Հայցվորը տիրապետման իրավունքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու իր ենթադրյալ իրավունքները հետազայում իրացնելու նպատակով, տարբեր բնույթի վարչական հայցերով դիմել է դատարան՝ ըստ էության բարձրացնելով իր ժառանգման իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ հարցեր: ...Գործի

դատաքննության նախապատրաստելու փուլի կանոնների ճիշտ կիրառումն ապահովում է օրինական և հիմնավորված դատական ակտի կայացումը: Այսինչ բողոքարկվող գործով Հայցվորը, սխալ ձևակերպելով իր հայցային պահանջները, ակնկալել է վարչական դատավարության կարգով վերականգնել իր խախտված իրավունքները»: Գերագույն դատարանը նշված որոշմամբ արձանագրել է նաև, որ «հայցատեսակի ընտրության սուբյեկտիվ իրավունքը բոլոր դեպքերում պատկանում է հայցվորին, սակայն այն հստակեցնելու կամ ճիշտ հայցատեսակով փոխարինելու առաջարկությունը՝ դատարանին»:

Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով Վարչական և Վերաքննիչ դատարանները, նույնպես անտեսելով այն, որ վարչական ակտը /գործողությունը/ անվավեր /առ ոչինչ/ ճանաչելու համար անհրաժեշտ է երկու պայմանների միաժամանակյա առկայությունը. հայցվորի իրավունքների խախտումը և վարչական ակտի /գործողության/ օրենքներին հակասելը, և որ ժառանգությունն ընդունած ժառանգ համարելու համար անհրաժեշտ էր ներկայացնել վեց ամսվա ընթացքում նոտարին դիմելու փաստը հաստատող փաստաթուղթ կամ էլ ժառանգական գույքը փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ընդունելու վերաբերյալ դատական ակտ, այնուամենայնիվ, չեն պարզել հայցվորի պահանջների բնույթը և, նշված հարցը քննարկելով վարչական դատավարության կարգով, հանգել են այն եզրակացության, որ հայցվորը չի ապացուցել ժառանգությունն ձեռք բերելու փաստը: Մինչդեռ տվյալ փաստի հաստատումը /որպես հիմնական պահանջի/ պետք է իրականացվեր ոչ թե վարչական, այլ քաղաքացիական դատավարության կարգով: Եվ միայն նշվածի հաստատումը կարող է վկայել այն մասին, որ հայցվորը սույն գործով շահագրգիռ անձ է, քանի որ օրենսդիրը, նախատեսելով վարչական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը, նրանց՝ դատարան դիմելու իրավունքի իրականացումը յուրաքանչյուր դեպքում պայմանավորել է որոշակի իրավական նախադրյալների, այն է՝ «իրավական շահի» առկայությամբ: Այսինքն, անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական /ռեալ/» իրավունքներ:

Գերագույն դատարանը փաստում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային որոշումներում անդրադարձնալով նշված հարցին, նշել է, որ «վեճը պետք է լինի իրական և իր բնույթով՝ լուրջ: Վեճը չի կարող կապված լինել անձի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ աննշան կամ հեռակա կերպով, այլ հենց այդ իրավունքները և պարտականությունները պետք է կազմեն հայցի առարկան, և վեճի հնարավոր լուծումը պետք է վճռական և ուղղակի նշանակություն և ազդեցություն ունենա պաշտպանվող իրավունքների և ազատությունների վրա»:

Վարչական ակտի անվավեր ճանաչման նախադրյալներին, «իրավական շահագրգռվածության» հարցերին Գերագույն դատարանն անդրադարձել է իր նախկինում ընդունված մի շարք որոշումներում /տե՛ս, օրինակ, ԸԻԴ N0188/05/2015թ. վարչական գործով Գերագույն դատարանի առ 11.05.2016թ. որոշումը, ԸԻԴ N0269/05/2013թ. վարչական գործով առ 25.11.2014թ. որոշումը/:

Այսպես, ԸԻԴ N 0188/05/2015թ. գործով Գերագույն դատարանն արձանագրել է. «Անձն իր իրավունքների և օրինական շահերի դատական

պաշտպանությունը կարող է հայցել միայն այն դեպքում, երբ գտնում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ նրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ անմիջականորեն խախտվել են կամ կարող են խախտվել նրա իրավունքները և օրինական շահերը: Հետևաբար, պարզ է դառնում, որ վարչական արդարադատություն հայցող անձի պահանջը կարող է բավարարվել միայն նրա մոտ իրավական շահագրգռվածության առկայության դեպքում, երբ խախտվել են նրա իրավունքներն ու օրինական շահերը»:

Ի դեպ, Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանն անհիմն է կիրառել ԸԻԴ N0188/05/2015թ. գործով Գերագույն դատարանի արտահայտած դիրքորոշումները, քանի որ նշված գործերով փաստական հանգամանքները նույնանման չեն: Նշված գործով չի ներկայացվել որևէ վերաբերելի ապացույց այն մասին, որ հայցվորը փաստացի տիրապետման եղանակով ընդունել է ժառանգությունը, մինչդեռ սույն գործով հայցվորի պահանջը՝ ժառանգությունը ընդունած ժառանգ ճանաչելու մասին պետք է քննարկման առարկա հանդիսանա այլ գործի քննության շրջանակներում /որը ներկա դրությամբ գտնվում է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի վարույթում/:

Անդրադառնալով վճռաբեկ բողոքում բարձրացված Վերաքննիչ դատարանի նախկինում կայացրած դատական ակտերի պարտադիրության հարցին, Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

Ըստ ԼՂՀ Սահմանադրության՝ Արցախի Հանրապետության դատական համակարգը բաղկացած է ընդհանուր իրավասության առաջին աստիճանի, վերաքննիչ դատարաններից և Գերագույն դատարանից: Գործող եռաստիճան դատական համակարգի պայմաններում դատական աստիճաններից յուրաքանչյուրն ունի իր գործառույթները՝ առաջին աստիճանի դատարանը գործերի ըստ էության քննության և լուծման միջոցով իրականացնում է անձանց խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, վերաքննիչ դատարանը դատական սխալներն ուղղելու գործառույթի միջոցով իրականացնում է անձանց իրավունքների պաշտպանությունը, իսկ Գերագույն դատարանը /վճռաբեկության կարգով գործը քննելիս/ կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը /Հանրապետության Նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը օրինական ուժի մեջ կմտնեն նաև Գերագույն դատարանի գործառույթներն ու լիազորությունները սահմանող Արցախի Հանրապետության Սահմանադրության 141-րդ հոդվածի դրույթները, համաձայն որոնց Գերագույն դատարանին վերապահված է ոչ միայն օրենքների և այլ իրավական ակտերի միատեսակ կիրառության ապահովման, այլև մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումների վերացման գործառույթը:

Գերագույն դատարանը հարկ է համարում փաստել, որ դատարանների աստիճանակարգությունն առաջին հերթին կոչված է ապահովելու դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության վերահսկողությունը վերադաս դատարանների կողմից, դատական սխալների ժամանակին ուղղումը, որն էլ երաշխավորում է ֆիզիկական և իրավաբանական անձանց օրինական շահերի և իրավունքների առավել պաշտպանությունը:

ԼՂՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ հոդվածների համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես



իրավական փաստարկ իրավունք ունի մատնանշելու նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով ԼՂՀ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները /այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները/: Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Գերագույն դատարանի դատական ակտի հիմնավորումները /այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները/ պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Մեկնաբանելով վերը նշված իրավական նորմերը, Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատական ակտերի հեղինակավորությունը և դատարանների կողմից իրավական նորմերի միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով, դատարանները պետք է ձգտեն միատեսակ դատական պրակտիկայի ձևավորմանը և չնայած, որ օրենսդիրը «դատական ակտի հիմնավորումների, օրենքի մեկնաբանությունների» պարտադիրությունը նախատեսել է միայն Գերագույն դատարանի դատական ակտի համար, այն էլ՝ բացառություն սահմանելով այն դեպքերի համար, երբ դատարանը ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ, այնուամենայնիվ, յուրաքանչյուր դեպքում, երբ ստորադաս դատարանը բեկանված և նոր քննության ուղարկված գործերով, ունենում է այլ՝ վերադաս դատարանի դիրքորոշումից տարբերվող դիրքորոշում, նա պետք է անպայման հիմնավորի իր դիրքորոշումը, իսկ Գերագույն դատարանի դատական ակտի առկայության դեպքում՝ ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ:

Այսպիսով, Գերագույն դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կողմից սույն գործով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չեն ստուգվել, հետազոտվել և գնահատվել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, հետևաբար բողոքարկված որոշումը ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածների ուժով պետք է բեկանել և գործն ուղարկել ԱՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության: Միայն գործի նոր քննության ընթացքում պարզելով հայցվորի պահանջների ենթակայության /ընդդատության/ հարցը, հնարավոր կլինի գործով ընդունել օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ: Գերագույն դատարանի նման լիազորությունը բխում է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներից, համաձայն որոնց՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: ...բեկանված մասով գործն ուղարկում է համապատասխան դատարան նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

Գերագույն դատարանը վճռաբեկ բողոքի մնացած փաստարկներին չի անդրադառնում, քանի որ նախ՝ դրանք Վերաքննիչ դատարանի կողմից չեն

քննարկվել, երկրորդ՝ միայն գործի նոր քննության ընթացքում՝ առաջին ատյանի դատարանի վարությամբ գտնվող գործերի հետ միացվելու /կամ հիմնական պահանջը քննելու/ և հայցվորի կողմից ներկայացված հայցապահանջների իրական նպատակը հստակեցնելու դեպքում հնարավոր կլինի պատասխանել այն հարցին, թե արդյոք հայցվորի իրավունքները ենթակա են դատական պաշտպանությանը, թե՛ ոչ: Հետևաբար այդ մասով, վերոնշյալ պատճառաբանություններից ելնելով, Գերագույն դատարանն անհիմն է համարում վճարել բողոքի այն փաստարկները, որ սկզբում պետք է առաջին ճանաչվեն վիճարկվող ակտերը և հետո հայցվորը հնարավորություն ունենա իրականացնել իր ժառանգական իրավունքների պաշտպանությունը:

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին, Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից: Նույն օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտի կողմից վկաներին և փորձագետներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, Գերագույն դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցին անհրաժեշտ է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճարել բողոքը բավարարել: Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2017 թվականի ապրիլի 28-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն

**Գ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ  
Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ  
Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԻԴ 2330/02/16թ.  
Քաղաքացիական գործ ԸԻԴ 2330/02/16թ.  
Նախագահող դատավոր՝ Կ.Սաղյան  
Դատավորներ՝ Հ.Աբրահամյան  
Ն.Գրիգորյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք. Ստեփանակերտ 26-ին հուլիսի 2017թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը /այսուհետ՝ Գերագույն դատարան/ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Ա. Հայրապետյանի  
դատավորներ՝ Գ. Գրիգորյանի  
Ի. Կարապետյանի

Դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Սվետլանա Ռուբենի Քոչարյանի ընդդեմ Կարինե Արտաշեսի Դանիելյանի և Թամարա Աշոտի Դանիելյանի՝ նվիրատվության պայմանագիրն ու դրա հիման վրա կատարված իրավունքների պետական գրանցումն անվավեր ճանաչելու մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. մայիսի 16-ի որոշման դեմ հայցվոր Սվետլանա Ռուբենի Քոչարյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան/ ընդդեմ Կ.Դանիելյանի և Թ.Դանիելյանի /այսուհետ՝ նաև Պատասխանողներ/՝ Ս.Քոչարյանը /այսուհետ՝ նաև Հայցվոր/ խնդրել է անվավեր ճանաչել նվիրատվության պայմանագիրն ու դրա հիման վրա կատարված իրավունքների պետական գրանցումը:

Առաջին ատյանի դատարանը 2017թ. փետրվարի 24-ի վճռով հայցը բավարարել է մասնակի. որպես առոչինչ գործարքի անվավերության հետևանք՝ անվավեր է ճանաչել 2016թ. հուլիսի 13-ի թիվ 2657 նվիրատվության պայմանագրի հիման վրա օգոստոսի 10-ի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-10 մատյանի 011975 համարի տակ կատարված ք.Ստեփանակերտ, Ն.Ստեփանյան փողոցի թիվ 9 շենքի թիվ 12 բնակարանի նկատմամբ Թ.Դանիելյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը: Ըստ Ս.Քոչարյանի հայցի ընդդեմ Կ.Դանիելյանի և Թ.Դանիելյանի՝ 2016թ. հուլիսի 13-ի թիվ 2657 նվիրատվության պայմանագիրն

անվավեր ճանաչելու պահանջի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է:

Առաջին աստիճանի դատարանի նշված վճռի դեմ վերաքննիչ բողոք են ներկայացրել Պատասխանողները՝ խնդրելով բեկանել և փոփոխել վճիռը, հայցն ամբողջությամբ մերժել:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2017թ. մայիսի 16-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, Առաջին աստիճանի դատարանի 2017թ. փետրվարի 24-ի վճիռը մասնակիորեն բեկանել և փոփոխել է, Ս.Քոչարյանի հայցը՝ մերժել:

Սույն գործով 2017թ. հունիսի 14-ին վճռաբեկ բողոք է ներկայացրել Հայցվորը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել պատասխանող Կ.Դանիելյանը:

## **2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը, որոշում կայացնելիս թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Բողոք բերող անձը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն առերևույթ խախտել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի, ինչպես նաև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ, 231-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 235-րդ, 236-րդ, 238-րդ, 239-րդ, 240-244-րդ հոդվածների դրույթները, ինչն ազդել է գործի ելքի վրա և Հայցվորի համար առաջացրել ծանր հետևանքներ:

Նշված պնդումները բողոք բերող անձը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը պատշաճ չի գնահատել գործում առկա Հայցվորից Պատասխանողին ուղղված երկու նամակ-ծանուցագրերը՝ պարտքի գումարը հետ պահանջելու մասին և նշված գրավոր ապացույցները չի դասել ապացույցների շարքին: Մինչդեռ, ըստ բողոքաբերի, այդ երկու ծանուցագրերն են առիթ հանդիսացել, որպեսզի Պատասխանողը բնակարանը նվիրի իր դստերը: Վերաքննիչ դատարանը սխալ է որոշել վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը և, որպես այդպիսին, բողոքարկվող որոշման մեջ հիշատակել է միայն Կ. և Թ. Դանիելյանների միջև կնքված վիճելի բնակարանի նվիրատվության պայմանագրի, այդ բնակարանի նկատմամբ Թ.Դանիելյանի սեփականության իրավունքի գրանցման և նշված բնակարանն արգելանքի տակ չգտնվելու և գրավի առարկա չհանդիսանալու փաստերը, այն դեպքում, երբ առկա են սույն գործով լուծման համար առավել կարևոր նշանակություն ունեցող այլ փաստեր, ուստի, հիմք ընդունելով վերը շարադրվածը բողոքաբերը պնդում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի պահանջները և չի անդրադարձել այդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, այն է՝ գործարքն առջինն է ոչ միայն, երբ այն կեղծ է, այլ այն կեղծ է նաև երբ այն շինծու է՝ այսինքն, երբ այն կնքվել է մեկ այլ գործարքի քողարկման նպատակով:

Հայցադիմումի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Հայցվորը, որպես իր պահանջի իրավական հիմնավորում, հայցադիմումում նշել է գործարքի կեղծ լինելու հանգամանքը, որը նախատեսված է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 1-ին մասով:

Ըստ բողոքաբերի, օրենսդիրը հստակ նշել է, որ կեղծ է համարվում այն գործարքը, որը կնքվել է առերևույթ առանց իրավաբանական հետևանքներ առաջացնելու մտադրության, նշելով նաև, որ կնքելով այդպիսի գործարք, կողմերը հստակ գիտակցում են, որ սլյալ գործարքով իրենց համար որևէ իրավունք կամ պարտականություն չի ծագում: Մույն գործով հաստատված է, որ Պատասխանողը Հայցվորի հանդեպ ունի պարտավորություններ, որոնք ժամանակին պատշաճ չի կատարել և ըստ Հայցվորի, դրանց կատարումը ողջամիտ ժամկետում անհավանական է, ուստի Հայցվորը պահանջել է Պատասխանողից վերադարձնելու գումարները՝ ուղարկելով երկու նամակ-ծանուցագրեր:

Բողոք բերող անձը պնդում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ գործով առկա չէ որևէ ապացույց, որով կհաստատվի այն փաստը, որ վերը նշված նվիրատվության գործարքը կնքվել է առանց իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության, անհիմն է, քանի որ գործով ապացուցված է, որ չնայած, տեղի է ունեցել նվիրատվության գործարք, սակայն բնակարանը դեռևս գտնվում է նվիրատուի օգտագործման և նույնիսկ տիրապետման ներքո, որովհետև նվիրատուն բնակարանը հանձնել է վարձակալության՝ ստանալով վարձավճարները:

Վերաքննիչ դատարանը, հերքելով նվիրատվության պայմանագրի կեղծ լինելու փաստը, անտեսել է Հայցվորի հանդեպ Պատասխանողի ունեցած պարտավորությունները, դրանք ժամկետում չկատարելը, երկու նամակ-ծանուցագրերի առկայությունը և նշված փաստերի ու նվիրատվության պայմանագրի միջև առկա պատճառահետևանքային կապը:

Բողոքաբերը համոզված է, որ գործարքի կեղծ լինելու համար պարտադիր պայման է, որ միայն այդ գործարքով իրավական հետևանքներ չառաջանալու, այլ նաև գործարքի մասնակցի կամ մասնակիցների նպատակներն ու գործարքից ծագող իրավական հետևանքները:

Բողոքաբերը շեշտել է նաև, որ սույն գործով Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և կնպաստի իրավունքի զարգացմանը:

Բողոքաբերը, հիմք ընդունելով վերը շարադրված փաստերը, խնդրում է բեկանել Վերաքննիչ դատարանի 2017թ. մայիսի 16-ի որոշումը, փոփոխել այն և կայացնել նոր դատական ակտ՝ Առաջին ատյանի դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին կամ գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.**

Վճռաբեկ բողոքի պատասխանում Կ.Դանիելյանը նշել է, որ իր կողմից շինծու գործարք չի կնքվել: Գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր է, որ իր կողմից պատասխանատվությունից խուսափելու մտադրություն չկար, հակառակը, ինքը դիմել է ԼՂՀ գլխավոր դատախազություն՝ իր և Հայցվորի միջև առկա պարտավորությունները ստուգելու համար:

Գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր է և ենթակա չէ բեկանման, իսկ վճռաբեկ բողոքն անհիմն է և մերժման ենթակա:

**4.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ըստ 2016թ. հուլիսի 13-ի նվիրատվության պայմանագրի՝ Կ.Դանիելյանը պարտավորվում է Թ.Դանիելյանի սեփականությանն անհատույց հանձնել Ստեփանակերտ քաղաքի Ն.Ստեփանյան փողոցի թիվ 9 շենքի թիվ 12 հասցեում գտնվող Կ.Դանիելյանի սեփականությունը հանդիսացող բնակարանը:

2. Նշված բնակարանի նկատմամբ 2016թ. օգոստոսի 10-ին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 4-10 մատյանի 011975 համարի տակ գրանցվել է Թ.Դանիելյանի սեփականության իրավունքը:

3. Ըստ ԼՂՀ կառավարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության Ստեփանակերտի բաժնի կողմից 2016թ. հուլիսի 13-ի տեղեկանքի՝ նշված բնակարանն արգելանքի տակ չի գտնվում և գրավադրված չէ:

**5.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշման՝ օրենքի միատեսակ կիրառության համար էական նշանակություն ունենալու հանգամանքով:

Վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը՝ Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկության կարգով գործի քննության ժամանակ Գերագույն դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Սույն վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի խախտման հիմքով, ուստի Գերագույն դատարանի առջև բարձրացված է հետևյալ իրավական խնդիրը՝ առկա է, արդյո՞ք, վերանայվող դատական ակտում նյութական և դատավարական օրենքի այնպիսի խախտում, որը հիմք է հանդիսանում վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի համաձայն՝ նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը՝

1. չի կիրառել այն օրենքը կամ ԼՂՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը պետք է կիրառեր.

2. կիրառել է այն օրենքը կամ ԼՂՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը չպետք է կիրառեր.

3. սխալ է մեկնաբանել օրենքը կամ ԼՂՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը:

Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմի խախտումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Նշված հոդվածների մեկնաբանությունից ուղղակիորեն հետևում է, որ Գերագույն դատարանը՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածով սահմանված իր լիազորությունների շրջանակներում, բեկանում է վերանայվող դատական ակտը և բավարարում վճռաբեկ բողոքն այն դեպքում, երբ վճռաբեկ բողոքում նշված փաստարկներն էական են գործի ըստ էության ճիշտ լուծման համար, երբ վերանայվող դատական ակտն անհիմն և անօրինական է ու կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներով, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծման:

Բողոքաբերը պնդում է, որ կնքված նվիրատվության պայմանագիրը կեղծ է և Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական նորմի խախտում, այն է՝ սխալ է մեկնաբանել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածը, դրանով իսկ թույլ է տվել էական դատական սխալ, արդյունքում կայացնելով անհիմն դատական ակտ:

Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքերին պատշաճ իրավական գնահատական տալու համար անհրաժեշտ է կատարել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի մի շարք նորմերի համակարգված վերլուծություն:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի...:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս:

Նույն օրենսգրքի 593-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը /նվիրատուն/ մյուս կողմի /նվիրառուի/ սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք կամ իրեն կամ երրորդ անձին ուղղված գույքային իրավունք /պահանջ/, կամ ազատում է, կամ պարտավորվում է նրան ազատել իր կամ երրորդ անձի հանդեպ ունեցած գույքային պարտավորությունից:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի համաձայն՝ կեղծ գործարքը, այսինքն՝ առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված գործարքը, առոչինչ է:

Նշված հոդվածների մեկնաբանությունից պարզ է դառնում, որ նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու և դրա նկատմամբ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կանոնները կիրառելու համար օրենսդիրն անհրաժեշտ է համարել գործի

քննության ընթացքում ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հիմքերով՝ գործարքն առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքելու փաստի քննարկումը և հաստատումը: Այսինքն, գործարքի կեղծ լինելը փաստելու համար անհրաժեշտ է ապացուցել, որ այն կնքվել է առանց իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության՝ այսինքն, նպատակ չի հետապնդել կողմերի համար առաջացնել համապատասխան իրավունքներ և պարտականություններ: Այսինքն, կեղծ գործարքի առկայությունը որոշելիս դատարանը յուրաքանչյուր գործով պետք է բացահայտի կեղծ գործարքին բնորոշ հատկանիշները: Ընդ որում, յուրաքանչյուր հատկանիշի առկայության կամ բացակայության մասին դատարանի հետևությունը պետք է ձևավորվի գործով ձեռք բերված բոլոր թույլատրելի և վերաբերելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում՝ հաշվի առնելով ապացույցների համակցությունը և փոխադարձ կապը, ինչպես նաև դատարանի ներքին համոզմունքը: Հետևաբար, գործարքը կեղծ ճանաչելու համար սույն գործի քննության շրջանակներում ստորադաս դատարանները պարտավոր էին բոլոր ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ անմիջականորեն գնահատել յուրաքանչյուր ապացույց՝ պարզելու համար կեղծ գործարքը կնքելու իրական շարժառիթները, գործարքի իրավական հետևանքները փաստացի առաջացնելու կողմերի, այն է՝ սույն գործով Պատասխանողների ներքին կամքի բացակայությունը, նպատակները, կապված գործարքի կնքման հետ, ինչպես նաև գործարքը փաստացի կատարված լինելու հանգամանքը՝ կեղծ գործարքի բոլոր մյուս հատկանիշների տեսանկյունից:

Սույն գործի նյութերից հետևում է, որ 2016թ. հուլիսի 13-ին Կ.Դանիելյանի և Թ.Դանիելյանի միջև կնքվել է նվիրատվության պայմանագիր, որով Կ.Դանիելյանը պարտավորվել է Թ.Դանիելյանի սեփականությանն անհատույց հանձնել Ստեփանակերտ քաղաքի Ն.Ստեփանյան փողոցի թիվ 9 շենքի թիվ 12 հասցեում գտնվող Կ.Դանիելյանի սեփականությունը հանդիսացող բնակարանը: Նշված բնակարանի նկատմամբ 2016թ. օգոստոսի 10-ին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 4-10 մասյանի 011975 համարի տակ գրանցվել է Թ.Դանիելյանի սեփականության իրավունքը: Ըստ ԼՂՀ կառավարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության Ստեփանակերտի բաժնի կողմից 2016թ. հուլիսի 13-ի տեղեկանքի՝ նշված բնակարանն արգելանքի տակ չի գտնվում և գրավադրված չէ:

Բացի դրանից, ըստ կողմերի տված ցուցմունքների՝ նշված բնակարանի նկատմամբ 2011թ. մինչև 2014թ., գրանցված էր Հայցվորի սեփականության իրավունքը և 2014թ. Հայցվորն այդ բնակարանը վաճառել է պատասխանող Կ.Դանիելյանին:

Վերաքննիչ դատարանը, փաստելով, որ Կ.Դանիելյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակարանն իր կամքով նվիրել է իր դստերը, միաժամանակ եզրահանգել է, որ «գործում առկա չէ որևէ ապացույց, որով հաստատվում է այն փաստը, որ վերոնշյալ գործարքը կնքվել է առանց իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության: Ինչ վերաբերում է պատասխանող Կ.Դանիելյանի՝ հայցվոր Ս.Քոչարյանի հանդեպ ունեցած դրամական պարտավորությունների առկայությանը, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այդ փաստը բավարար չէ՝ Պատասխանողների միջև



կնքված գործարքը կեղծ լինելու, այսինքն՝ առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության բացակայությունը հաստատելու համար»:

Գերագույն դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանն իրականացրել է գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատում՝ կեղծ գործարքի վերը շարադրված պայմանների՝ առկայությունը պարզելու ուղղությամբ և հանգել է ճիշտ հետևության՝ մերժելով հայցը:

Այսպիսով, հիմք ընդունելով վերը շարադրված եզրահանգումները՝ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքարկված որոշումը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ չի տվել դատական ակտը բեկանելու կամ փոփոխելու հիմք հանդիսացող նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտում, հետևաբար անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված Գերագույն դատարանի լիազորությունը և մերժել վճռաբեկ բողոքը՝ Վերաքննիչ դատարանի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Գերագույն դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

#### **6.Գերագույն դատարանի պատճառաբանությունները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին, Գերագույն դատարանը փաստում է.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 7-րդ կետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններով:

Սույն գործով դատական ծախսերը կազմված են պետական տուրքից:

Հաշվի առնելով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, իսկ վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարվել է բողոք բերող անձի կողմից, ուստի դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հայցվոր Սվետլանա Քոչարյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. մայիսի 16-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:
2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություն Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ  
ստորագրություն Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԲԴ 0151/02/17թ.  
Քաղաքացիական գործ ԸԲԴ 0151/02/17թ.  
Նախագահող դատավոր՝ Ն.Գրիգորյան  
Դատավորներ՝ Հ.Գրիգորյան  
Կ.Սադյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք. Ստեփանակերտ 9-ին օգոստոսի 2017թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը /այսուհետ՝ Գերագույն դատարան/ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Ն.Նարիմանյանի  
մասնակցությամբ՝ դատավորներ Գ. Գրիգորյանի  
Ա.Աբրահամյանի

դռնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի Կամո Հրանտի Սաֆարյանի և Նուբար Հրանտի Սարգսյանի ընդդեմ «Արցախբանկ» ՓԲԸ՝ գումար բռնագանձելու պահանջի մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. հունիսի 30-ի որոշման դեմ պատասխանող «Արցախբանկ» ՓԲԸ ներկայացուցիչ Տ. Ավետիսյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան/ ընդդեմ «Արցախբանկ» ՓԲԸ /այսուհետ՝ նաև Պատասխանող/ Կամո Սաֆարյանն ու Նուբար Սարգսյանը /այսուհետ՝ նաև Հայցվորներ/ խնդրել են բռնագանձել 3.250.000 /երեք միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի հատուցման գումար:

Առաջին ատյանի դատարանը 2017թ. ապրիլի 26-ի վճռով հայցը մերժել է:

Հայցվորների և գործով երրորդ անձ Դ.Օհանյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ԼՂՀ վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2017թ. հունիսի 30-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարել է, Առաջին ատյանի դատարանի 2017թ. ապրիլի 26-ի վճիռը բեկանել և փոփոխել է. հայցը՝ բավարարել:

Պատասխանողից հոգուտ Հայցվորների բռնագանձվել է 3.250.000 /երեք միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի հատուցում:

Սույն գործով վճարեկ բողոք է ներկայացրել Պատասխանողի ներկայացուցիչ Տ.Ավետիսյանը:

Վճարեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2.Վճարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք ազդել են գործի էլքի վրա:

Բողոքաբերը պնդում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի, 304-րդ հոդվածի 2-րդ մասի, 445-րդ հոդվածի 2-րդ մասի, 562-րդ հոդվածի 2-րդ մասի, 1061-րդ հոդվածի 1-ին մասի, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի, 239-րդ հոդվածի 1-ին կետի, 240-րդ հոդվածի պահանջները:

Նշված պնդումները բողոք բերողը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Ըստ բողոքաբերի՝ Հայցվորներն իրենց պահանջը հիմնավորել են իրենց և Դ.Օհանյանի միջև կնքված նախնական պայմանագրով: Համաձայն ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածի 2-րդ մասի՝ նախնական պայմանագիրը կնքվում է հիմնական պայմանագրի համար սահմանված ձևով, իսկ եթե հիմնական պայմանագրի ձևը սահմանված չէ, ապա՝ գրավոր: Նախնական պայմանագրի ձևի կանոնները չպահպանելն այն դարձնում է առոչինչ: ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 562-րդ հոդվածը նոտարական վավերացում է պահանջում անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի կնքման համար: Այսինքն, հաշվի առնելով այն, որ սույն գործով հիմնական պայմանագիրը անշարժ գույքի առ ու վաճառքի պայմանագիրն է և օրենսդիրը հստակ սահմանել է, որ պայմանագիրը պետք է ստանա նոտարական վավերացում, ուստի, սույն գործում առկա նախնական պայմանագիրը նույնպես պետք է վավերացվի նոտարի կողմից, հակառակ դեպքում, այդ կանոնը չպահպանելը գործարքը դարձնում է առոչինչ:

Բողոք բերող անձը պնդում է, որ Վերաքննիչ դատարանը, խախտելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջը, ըստ որի՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, որոշում է կայացրել անտեսելով գործում առկա ապացույցները, այդ թվում՝ հիմնական ապացույց հանդիսացող «Նախնական պայմանագիր» վերտառությամբ փաստաթուղթը, որի կնքման ձևը պահպանված չէր: Դրանով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Բողոքաբերը շեշտել է, որ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է դրույթ այն մասին, որ գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, ուստի, սույն գործով երրորդ անձ հանդիսացող Դ.Օհանյանը պետք է Հայցվորների կողմից վճարած տույժի գումարը վերադարձնեք նրանց: Իսկ օրենքի ուժով վերադարձման ենթակա գումարը չի կարող դիտարկվել որպես ծախս կամ վնաս:

Բողոքաբերն անհիմն է համարել Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ «...«Արցախբանկ» ՓԲԸ կողմից ոչ իրավաչափ վարքագիծ է դրսևորվել: Սույն գործով գրավի դադարումն իրականացվել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով, այն է՝ գրավով ապահովված պարտավորությունը դադարելով: «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ԼՂՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիփոթեքի դադարման պետական գրանցումը և հիփոթեքի պետական գրանցման չեղարկումը հիփոթեքի պայմանագրի կողմերից որևէ մեկի, իսկ դատական կարգով հիփոթեքը դադարելու դեպքում՝ նաև շահագրգիռ անձի դիմումով իրականացվում է հիփոթեքով ապահովված պարտավորության դադարման դեպքում: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով հիփոթեքով ապահովված պարտավորությունը կատարմամբ դադարելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ է համարվում պարտավորությունը կատարմամբ դադարած լինելու մասին գրավառուի գրավոր հայտարարությունը: Նման հայտարարություն գրավառուի կողմից չի ներկայացվել:»:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը, բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2017թ. հունիսի 30-ի որոշումը՝ օրինական ուժ տալով նույն գործով Առաջին աստիճանի դատարանի վճռին:

### **3.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ըստ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 142692 վկայականի բնակելի տան նկատմամբ գրանցված է Հայցվորների ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:

2. Ըստ «Անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ» 2016թ. օգոստոսի 4-ի թիվ 0300 միասնական տեղեկանքի՝ բնակելի տան նկատմամբ գրանցված է Հայցվորների ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը, իսկ «Գույքային իրավունքների սահմանափակումներ» բաժնում նշված է, որ գույքը գրավադրված է «Արցախբանկ» ՓԲԸ Մարտունու մասնաճյուղում, ըստ 2012թ. մարտի 5-ի թիվ 332 հիփոթեքի պայմանագրի, մինչև 2017թ. մարտի 5-ը:

3. Ըստ 2016թ. օգոստոսի 1-ի «Հետագայում անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր կնքելու պարտավորություն ստանձնելու մասին նախնական պայմանագրի /այսուհետ՝ նաև՝ Նախնական պայմանագիր/ Հայցվորները պարտավորվել են սեփականության իրավունքով պատկանող ԼՂՀ Մարտունու շրջանի Ճարտար քաղաքում գտնվող բնակելի տունը 13.000.000 /տասներեք միլիոն/ ՀՀ դրամով վաճառելու Դ.Օհանյանին՝ պայմանագրում նշված ժամկետում:

4. Գործում առկա 2016թ. նոյեմբերի 30-ին կնքված «Համաձայնագիր» վերտառությամբ փաստաթղթի համաձայն՝ Հայցվորները Դ.Օհանյանին վերադարձրել, իսկ վերջինս ստացել է որպես պայմանագրի կանխավճար տրամադրված 6.500.000 /վեց միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամը: Միաժամանակ, Հայցվորները Դ.Օհանյանին վճարել են, իսկ վերջինս ստացել

է պայմանագրով նախատեսված 3.250.000 /երեք միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ տույժի գումարից 2.000.000 /երկու միլիոն/ ՀՀ դրամը, իսկ տույժի մնացորդ 1.250.000 /մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամը պարտավորվել են վճարել մինչև 2017թ. մարտի 1-ը: Հայցվորները հայցային դիմումում նշել են, որ Դ.Օհանյանին արդեն իսկ վճարել են 3.250.000 /երեք միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամը, սակայն հիմնավորող որևէ ապացույց չեն ներկայացրել:

5.Նախնական պայմանագրի 1.4-րդ կետի համաձայն՝ կողմերը պարտավորվել են նույն պայմանագիրը նոտարական կարգով վավերացնելուց հետո 20-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան մինչև 2016թ. օգոստոսի 20-ը, նոտարի մոտ ստորագրել և նոտարական վավերացման ենթարկել գույքի առուվաճառքի հիմնական պայմանագիրը:

6.Նախնական պայմանագիրը նոտարական վավերացում չի ստացել:

#### **4.Գերագույն դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումը.**

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն գործով Հայցվորները խնդրել են Պատասխանողից հօգուտ իրենց բռնագանձել 3.250.000 /երեք միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ որպես պատճառված գույքային վնասի հատուցում: Ուստի, դատարանի առջև դրված է հետևյալ հարցը՝ արդյո՞ք Հայցվորները կրել են վնաս և ի՞նչ պարտավորություն է կրում Պատասխանողը վկայակոչած վնասը հատուցելու հարցում:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով կողմերի միջև իրավահարաբերությունները ձևավորվել են 2016թ. օգոստոսի 2-ից սկսած, այսինքն սույն գործով կիրառելի է ԼՂՀ ԱԺ կողմից 2016թ. փետրվարի 24-ին ընդունված ԼՂՀ քաղաքացիական օրենսգիրքը:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը /իրական վնաս/, չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր / բաց թողնված օգուտ/, ինչպես նաև ոչ նյութական վնասը:

Նույն օրենսգրքի 1061-րդ հոդվածը սահմանում է, որ քաղաքացու անձին կամ գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում շեշտել, որ պատճառված վնասի հատուցմանը վերաբերող գործերով դատարանները պետք է առանձնակի ուշադրություն դարձնեն ապացուցման առարկայի ճիշտ

որոշմանը: Դատարանները նախ և առաջ պետք է որոշեն այն իրավական փաստերի շրջանակը, որոնք էական նշանակություն ունեն քաղաքացիական գործի լուծման համար և դատաքննության ընթացքում պետք է պատշաճ իրավական քննարկման և գնահատման առարկա դարձնեն պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը:

Իրավական նշանակություն ունեցող այդ փաստերի համակցությունն էլ կազմում է ապացուցման առարկան, որը որոշելուց հետո միայն դատարանները, գնահատելով գործով ձեռք բերված ապացույցները, որոշում են ապացուցման առարկան կազմող իրավական փաստերի հաստատվելը կամ ժխտվելը և դրանից հետո միայն որոշում հայցը բավարարելու կամ մերժելու հարցը:

Մույն գործով հաստատված է, որ ըստ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 142692 վկայականի՝ բնակելի տան նկատմամբ գրանցված է Հայցվորների ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը, միաժամանակ, անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ 2016թ. օգոստոսի 4-ի թիվ 0300 միասնական տեղեկանքի համաձայն՝ «Գույքային իրավունքների սահմանափակումներ» բաժնում նշված է, որ գույքը գրավադրված է «Արցախբանկ» ՓԲԸ Մարտունու մասնաճյուղում, ըստ 2012թ. մարտի 5-ի թիվ 332 հիփոթեքի պայմանագրի, մինչև 2017թ. մարտի 5-ը: Ըստ կողմերի՝ անվիճելի է, որ նշված տան գրավով ապահովված պարտավորությունը դադարած է այն ամբողջությամբ կատարելու հիմքով՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 247-րդ հոդվածի ուժով: Նախնական պայմանագրով Հայցվորները պարտավորվել են սեփականության իրավունքով պատկանող ԼՂՀ Մարտունու շրջանի Ճարտար քաղաքում գտնվող բնակելի տունը 13.000.000 /տասներեք միլիոն/ ՀՀ դրամով վաճառել Դ.Օհանյանին՝ պայմանագրում նշված ժամկետում: Գործում առկա 2016թ. նոյեմբերի 30-ին կնքված «Համաձայնագիր» վերտառությամբ փաստաթղթի համաձայն՝ Հայցվորները Դ.Օհանյանին վերադարձրել, իսկ վերջինս ստացել է որպես պայմանագրի կանխավճար տրամադրված 6.500.000 /վեց միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամը: Միաժամանակ, Հայցվորները Դ.Օհանյանին վճարել են, իսկ վերջինս ստացել է պայմանագրով նախատեսված 3.250.000 /երեք միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ տույժի գումարից 2.000.000 /երկու միլիոն/ ՀՀ դրամը, իսկ տույժի մնացորդ 1.250.000 /մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամը պարտավորվել են վճարել մինչև 2017թ. մարտի 1-ը:

Անվիճելի է, որ թիվ 332 հիփոթեքի պայմանագրի դադարման վերաբերյալ հայտարարություն Պատասխանողը Հայցվորներին չի տրամադրել, ուստի միասնական տեղեկանքում այդ սահմանափակումը մնացել է արտացոլված: Այս հարցի վերաբերյալ Գերագույն դատարանն արձանագրում է, որ միասնական տեղեկանքը ստանալու և Նախնական պայմանագրում նշված ժամկետում հիմնական պայմանագիրը կնքելու միջև ընկած ժամանակահատվածում Հայցվորները զրկված չեն եղել իրենց խախտված իրավունքները դատական կարգով պաշտպանելու հնարավորությունից, այն է՝ պարտավորեցնելու Պատասխանողին տեղեկություն տրամադրել գրավի դադարման մասին:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցը բավարարելու կամ մերժելու համար դատարանը պետք է քննարկման և իրավական գնահատման առարկա դարձնե, նախ հետևյալ հարցը՝ արդյո՞ք Հայցվորների մոտ Նախնական պայմանագրի հիման վրա ծագել է Դ.Օհանյանին տույժ վճարելու պարտավորություն, և հետո միայն հնարավոր կլինի պարզել, թե ինչ վնաս են կրել Հայցվորները և առկա է, արդյո՞ք, պատճառահետևանքային կապ կրած վնասների և Պատասխանողի անօրինական գործողությունների միջև:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածի համաձայն՝ նախնական պայմանագրով կողմերը պարտավորվում են ապագայում կնքել գույք հանձնելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու մասին պայմանագիր /հիմնական պայմանագիր/ նախնական պայմանագրով նախատեսված պայմաններով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախնական պայմանագիրը կնքվում է հիմնական պայմանագրի սահմանված ձևով, իսկ եթե հիմնական պայմանագրի ձևը սահմանված չէ, ապա՝ գրավոր: Նախնական պայմանագրի ձևի մասին կանոնները չպահպանելն այն դարձնում է առոչինչ:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 562-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը կնքվում է գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով: Անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 299-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գործարքի նոտարական վավերացումը պարտադիր է կողմերից մեկի պահանջով, թեկուզև օրենքով տվյալ տեսակի գործարքների համար այդ ձևը չի պահանջվում:

Քանի որ սույն գործով նախնական պայմանագիրը կնքվել է անշարժ գույքի վերաբերյալ, ուստի Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ պայմանագրի ձևին: Վերը շարադրված ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերը մեկնաբանելիս, հստակ հետևում է, որ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր կնքելու դեպքում, երբ առկա է նախնական պայմանագիր, անհրաժեշտ վավերապայման է հանդիսանում պայմանագրի ձևի վերաբերյալ պահանջը, այն է՝ նախնական պայմանագիրը կնքվում է հիմնական պայմանագրի սահմանված ձևով, իսկ եթե հիմնական պայմանագրի ձևը սահմանված չէ, ապա՝ գրավոր: Նախնական պայմանագրի ձևի մասին կանոնները չպահպանելն այն դարձնում է առոչինչ:

Սույն գործով կողմերը, Նախնական պայմանագիր կնքելիս, նախատեսել են, որ Նախնական պայմանագիրը պետք է ստանա նոտարական վավերացում: Նույնը նախատեսված է նաև Նախնական պայմանագրով սահմանված ժամկետում հիմնական պայմանագրի կնքման համար, ուստի Գերագույն դատարանը փաստում է, որ սույն գործով կիրառելի է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 299-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված կանոնը:

Այսինքն, նախնական պայմանագիրը, ինչպես և հիմնական պայմանագիրը, ենթակա են նոտարական վավերացման, որպիսի պահանջը չպահպանելը հանգեցնում է պայմանագրի առոչնչության: Պայմանագրի առոչնչ լինելու փաստով կողմերի միջև չեն կարող առաջանալ համապատասխան պարտավորություններ, քանի որ նման գործարքը



չստանալով նոտարական վավերացում, առոչինչ է, այսինքն՝ այն չի հանգեցնում իրավաբանական հետևանքների առաջացմանը:

Վերոնշյալ դիրքորոշման համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները հիմնավոր չեն և չեն կարող դրվել վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքում:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ շեշտել է՝ «...Նախնական պայմանագիրը, ինչպես նաև դրանից բխող համաձայնագիրն ու ստացականը սույն գործով չեն համարվում վեճի առարկա, այլ դրանք ներկայացված են որպես Հայցվորների կողմից ծախս կատարելու փաստի մասին վկայող գրավոր ապացույցներ, ինչը հաստատում է Հայցվորների՝ որպես գույքի սեփականատերերի կողմից իրենց պատկանող Գույքի տնօրինման մասին այլ անձանց ուղարկված օֆերտայի և այն ընդունած լինելու մասին ակցեպտի մասին: Ուստի և Նախնական պայմանագրի՝ նյութական իրավունքի նորմերին համապատասխան կազմված չլինելու սուկ փաստը սույն գործի լուծման համար չունի էական նշանակություն, քանի որ սույն գործով վեճի առարկան համարվում է Բանկի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման հետևանքով Հայցվորների կողմից այլ անձի գումար վճարելու արդյունքում վնաս կրելը: Սույն գործով կարևոր է ոչ թե Նախնական պայմանագրի և դրանից բխող համաձայնագրի ու ստացականի՝ նյութական օրենքի պահանջներին կազմված լինելու փաստը, այլ Գույքի սեփականատերերի՝ Հայցվորների իրական մտադրության և հնարավորության միաժամանակյա առկայությունն այդ Գույքի տնօրինման եղանակների առնչությամբ:

Բացի այդ, Հայցվորների ու երրորդ անձ Դ.Օհանյանի կողմից նշված Նախնական պայմանագիրը չվիճարկելու և այն սույն գործով վեճի առարկա չհանդիսանալու պայմաններում այն Դատարանի կողմից որպես առոչինչ ճանաչելու և դրանով նախատեսված պարտավորությունների ռեստիտուցիա կիրառելը, Վերաքննիչ դատարանը համարում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ և 6-րդ հոդվածներով սահմանված քաղաքացիական դատավարությունում գործող տնօրինչության, մրցակցության և իրավահավասարության սկզբունքների խախտում»:

Գերագույն դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը վերը նշված դիրքորոշմանը հանգել է՝ անտեսելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի պահանջը: Քանի որ սույն գործով Նախնական պայմանագիրը կնքված է առանց նոտարական վավերացման և առոչինչ է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով, ուստի սույն գործով Հայցվորների և Դ.Օհանյանի միջև իրավական հետևանքներ առաջացնող պարտավորություններ չեն ձևավորվել: Նշվածը վերաբերում է նաև Հայցվորների կողմից Դ.Օհանյանին տույժ վճարելուն: Թեև Պատասխանողը Հայցվորներին պատկանող բնակելի տան գրավը դադարելու վերաբերյալ հայտարարություն չի տրամադրել և վերջիններս ծախս են կատարել՝ Դ.Օհանյանին վճարելով նախնական պայմանագրով նախատեսված տույժի գումարը, սակայն այդ ծախսը կատարվել է առոչինչ գործարքի շրջանակներում, ուստի հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Հայցվորները Պատասխանողի գործողությունների հետևանքով կրել են վնաս:

Գերագույն դատարանը հիմնավոր է համարում Առաջին ատյանի հետևությունն այն մասին, որ Հայցվորների կողմից Դ.Օհանյանին վճարված գումարները, որպես առոչինչ գործարքի հետևանք, ենթակա են վերադարձման Հայցվորներին, և որ Պատասխանողը նման պայմաններում վնասը հատուցելու պարտավորություն չի կրում:

Գերագույն դատարանը հիմնավոր է համարում Առաջին ատյանի դատարանի եզրահանգումն այն մասին, որ «..նախնական պայմանագիրը նոտարական վավերացման չներկայացնելու պարագայում այդ նախնական պայմանագրով սահմանված գործարքը, ինչպես հիմնական պարտավորության, այնպես էլ լրացուցիչ պարտավորության /տուժանք վճարելու մասին/ մասով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ, 368-րդ հոդվածների ուժով առոչինչ է, իսկ առոչինչ գործարքի արդյունքում Հայցվորների կողմից Դ.Օհանյանին վճարված գումարները տույժի տեսքով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի ուժով, որպես առոչինչ գործարքի հետևանք, ենթակա են վերադարձման Հայցվորներին:»

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ անհիմն է Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ և 6-րդ հոդվածներով սահմանված քաղաքացիական դատավարությունում գործող տնօրինչության, մրցակցության և իրավահավասարության սկզբունքների խախտում: Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով կիրառելի է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 3-րդ մասը, որը սահմանում է, որ առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջ կարող է ներկայացնել ցանկացած շահագրգիռ անձ: Դատարանն իրավունք ունի այդպիսի հետևանքներ կիրառել սեփական նախաձեռնությամբ, ուստի Վերաքննիչ դատարանի եզրահանգումները հերքվում են ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 239-րդ և 240-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Գերագույն դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Գերագույն դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Գերագույն դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Գերագույն դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է

արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Գերագույն դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը: Առաջին ատյանի դատարանը դատաքննությամբ հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ կիրառել է նյութական և դատավարական իրավունքի համապատասխան նորմերը և կայացրել օրինական և հիմնավորված վճիռ:

**5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

Նույն օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով Վերաքննիչ դատարանում Հայցվորները և Դ.Օհանյանը միջնորդություն են ներկայացրել՝ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու վերաբերյալ, որը բավարարվել է Վերաքննիչ դատարանի 2017թ. հունիսի 15-ի՝ «Միջնորդությունները քննարկելու և վերաքննիչ բողոքները վարույթ ընդունելու մասին» որոշմամբ:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով վերաքննիչ բողոքները՝ 195.000 /հարյուր իննսունհինգ հազար/ ՀՀ դրամ գումարի չափով պետական տուրքը /որից՝ 97.500 /իննսունյոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամը՝ Դ.Օհանյանի և 97.500 /իննսունյոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամը՝ Հայցվորների ներկայացրած վերաքննիչ բողոքների համար նախատեսված և Վերաքննիչ դատարանի 2017թ. հունիսի 15-ի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար/ հոգուտ ԼՂՀ բյուջեի գանձել է Պատասխանողից: Հաշվի առնելով, որ Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման, վերաքննիչ բողոքների համար պետական տուրքը ենթակա է բռնագանձման Հայցվորներից՝ համապարտության կարգով և Դ.Օհանյանից:

Նկատի ունենալով, որ Պատասխանողը վճռաբեկ բողոքի համար վճարել է 97.500 /իննսունյոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ պետական տուրքի գումար, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, և որ այդ գումարը անհրաժեշտ է եղել բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, ուստի Գերագույն դատարանը գտնում է, որ բողոք բերողի կողմից նախապես վճարված պետա-

կան տուրքը ենթակա է հատուցման Հայցվորների կողմից՝ համապարտության կարգով:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. «Արցախբանկ» ՓԲԸ ներկայացուցիչ Տ.Ավետիսյանի վճռաբեկ բողոքը բավարարել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. հունիսի 30-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2017թ. ապրիլի 26-ի վճռին:

2. Կամո Հրանտի Սաֆարյանից և Նուբար Հրանտի Սարգսյանից համապարտության կարգով հոգուտ «Արցախբանկ» ՓԲԸ բռնագանձել 97.500 /իննսունյոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Կամո Հրանտի Սաֆարյանից և Նուբար Հրանտի Սարգսյանից համապարտության կարգով հոգուտ ԼՂՀ պետական բյուջեի բռնագանձել 97.500 /իննսունյոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախատեսված և Վերաքննիչ դատարանի 2017թ. հունիսի 15-ի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Դավիթ Էդուարդի Օհանյանից հոգուտ ԼՂՀ պետական բյուջեի բռնագանձել 97.500 /իննսունյոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախատեսված և Վերաքննիչ դատարանի 2017թ. հունիսի 15-ի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դաիլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴՍՏԱՎՈՐ՝**  
**Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ**  
**ստորագրություն**

**ԴՍՏԱՎՈՐ՝**  
**Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
**ստորագրություն**

**ԴՍՏԱՎՈՐ՝**  
**Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**  
**ստորագրություն**